

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, շաբաթ.—Նոր տարվա առաջին օրը Մայր տաճարում տարեմուտի ս. պատարագ է մատուցում Տ. Եվնիկ քհն. Պետրոսյանը:

Հավարտ ս. պատարագի պատարագիչ տեր հայրը Իշման Սուրբ Սեղանի առաջ քարոզում է քրիստոնյայի կոչման, բարոյական վարքագծի և եղբայրական սիրո մասին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է Հայրապետական մաղթանքի հանդիսավոր արարողություն:

* * *

Հունվարի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ Խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հակոբ քհն. Գյոկչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ որ առաքեացն կիս, մինչ աւուր կայ. գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել» (Հովհ. Թ 4) բնաբանով:

* * *

Հունվարի 7-ին, ուրբաթ.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ Խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Հունվարի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ Խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վարդապետ Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Գող ոչ գայ, եթէ ոչ զի գողասցի եւ սպանցէ եւ կորուսցէ. ես եկի զի կեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին» (Հովհ. Ժ 10) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ նվիրված նորոգ

հանգուցյալ, Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Հայկ Մելքոնյանի հիշատակին:

*
* *

Հունվարի 12-ին չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հունվարի 13-ին, հինգշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ Խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մանուկ քհն. Մարգարյանը:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին են այցելում Մոսկվայի հոգևոր ակադեմիայի ուսանողներ Վիկտոր Վաչչոյկը (ռուս պրավոսլավ Եկեղեցի), Տ. Սավա աբեղան (Սերբիայի պրավոսլավ Եկեղեցի), Կիրիլ Պոպովը (Բուլղարիայի պրավոսլավ Եկեղեցի) և Գեորգ Ցապը (Չեխոսլովակիայի պրավոսլավ Եկեղեցի):

Հյուրերին «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորում և բարի գալուստ է մաղթում Մայր Աթոռի միաբան Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել նրանց և տալ Իր հայրական օրհնություններն ու մաղթանքները:

Քույր Եկեղեցիների ուխտավորները հունվարի 13—15 օրերին եղան պատմական Վաղարշապատի վանքերում, այցելեցին մայրաքաղաքի Ս. Սարգիս եկեղեցի: Նրանք ուխտագնացություն կատարեցին Ս. Գեղարդի և Խորվիրապի վանքերը: Ապա այցելեցին հոգևոր ճեմարան, որից հետո՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան և Ծիծեռնակաբերդ:

Մայր Աթոռում գտնվելու օրերին նրանց ուղեկցում էր Մոմիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Հունվարի 16-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ Խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մահուամբ արդարոց ոչ կորնչի յոյսն» բնաբանով:

Պատարագիչ հայր սուրբը քարոզի ընթացքում խոսում է նորոգ հանգուցյալ, սփյուռքահայ գրող և հասարակական գործիչ, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկական բաժնի վարիչ Վահրամ Մավյանի կյանքի և գործունեության մասին:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ նվիրված Վահրամ Մավյանի հիշատակին:

* *
*

Հունվարի 19-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթի ընթացքում Տ. Հայկակուն աբեղա Նաջարյանը հանդես է գալիս Ս. Բարսեղ Մեծի սահմանած վանական կյանքի օրենքների մասին բանախոսությամբ:

*
* *

Հունվարի 23-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ Խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկակուն աբեղա Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս» (Հովհ. Գ 16) բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ Խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: